Մերրի Շահբազյան
Եվրասիա միջազգային համալսարանի
իրավագիտության ամբիոնի դասախոս, նույն ամբիոնի հայցորդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Գիտական հոդվածը նվիրված է օտարերկրացիների կացության կարգավիճակ ձեռք բերելու կարգին ու պայմաններին: Հեղինակը իրավահամեմատական վերլուծության է ներկայացրել «օտարերկրացի» եզրույթը՝ նշելով, որ այն իր մեջ ներառում է ոչ միայն օտարերկրացիներին, այլ նաև քաղաքացիություն չունեցող անձանց: Հեղինակը ներկայացնում է կացության ժամանակավոր, մշտական և հատուկ կարգավիճակները, վերլուծում դրանցում առկա իրավական հիմնախնդիրները և առաջարկում լուծման մեխանիզմներ:

Հիմնաբառեր. Օտարերկրացի, քաղաքացիություն չունեցող անձ, կացության կարգավիճակ, ժամանակավոր կացության կարգավիճակ, մշտական կացության կարգավիճակ, հատուկ կացության կարգավիճակ:

Իրավաբանական մասնագիտական գրականության մեջ «Օտարերկրացի» եզրույթը դիտարկվում է որպես հավաքական հասկացություն, որն իր մեջ ներառում է երկու կատեգորիա՝ օտարերկրյա քաղաքացի և քաղաքացիություն չունեցող անձ[1]: Նմանատիպ մոտեցում է ցուցաբերում նաև Հայաստանի Հանրապետության «Օտարերկրացիների մասին» օրենքը, համաձայն որի «օտարերկրացիներ» հասկացության մեջ ներառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհամարվող այն անձինք, որոնք ու-

1 Տես Д.Б. Катков , Е. В. Корчугов. Конституционное право России. Учебное пособие. М. 1999, էջ 162: Տես նաև Վ.Այվազյան և ուրիշներ: ՀՀ Սահմանադրական իրավունք. Գիրք առաջին. Երևանի պետական համալսարան.- Եր.: 2016թ. էջ 230:

նեն այլ պետության քաղաքացիություն (օտարերկրյա քաղաքացիներ) կամ չունեն որևէ պետության քաղաքացիություն (քաղաքացիություն չունեցող անձինք): Նույն հոդվածի բովանդակությունից երևում է, որ օրենքը տարբերակում չի դնում այդ անձանց իրավունքների, ազատությունների և պարտականությունների ծավալում, սակայն հետագա շարադրանքից պարզ է դառնում, որ առկա են որոշակի բացառություններ՝ կախված այն հանգամանքից, թե իրավունքի որ ճյուղին է առնչվում տվյալ հասարակական հարաբերությունը:

Հայաստանի Հանրապետություն ժամանած և մինչև մեկ տարի կամ դրանից ավելի ժամանակահատվածով Հայաստանում բնակություն հաստատող օտարերկրացիները «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն կարող են ձեռք բերել կացության հետևյալ կարգավիճակներից որևէ մեկը՝

1. ժամանակավոր կացության կարգավիճակ,
2. մշտական կացության կարգավիճակ,
3. հատուկ կացության կարգավիճակ:

Օտարերկրացիների վերոնշյալ կարգավիճակները հաստատող փաստաթղթեր են համապատասխանաբար՝ ժամանակավոր կացության քարտը, մշտական կացության քարտը և հատուկ անձնագիրը, որոնց ձևերը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է յուրաքանչյուր օտարերկրացու, եթե նա հիմնավորում է իր՝ Հայաստանի Հանրապետության տարածքում մեկ տարի և ավելի ժամկետով բնակվելը հիմնավորող հանգամանքները: Այդպիսի հանգամանքներ կարող են լինել, օրինակ՝ ուսումը, աշխատանքը, եթե առկա է համապատասխան թույլտվությունը, Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսին, ծնող կամ զավակ լինելը և այլն: Անձանց հստակ կատեգորիան սահմանված է «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14–րդ հոդվածի առաջին կետով: Ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է 1 տարվա ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ մեկ տարով երկարաձգելու հնարավորությամբ: Ժամանակավոր կացության կարգավիճակը երկարաձգելու դիմումը պետք է ներկայացվի կարգավիճակի ժամկետը լրանալուց առնվազն 30 օր առաջ:

Առանձնակի հետքրքրություն է ներկայացնում ուսման նպատակով ժամանակավոր կացության կարգավիճակ տրամադրելու ընթացակարգը: Ինչո՞ւմ է այն կայանում: Օտարերկրացին, ով առաջին անգամ Հայաստան է ժամանել ուսում ստանանալու նպատակով, անհրաժեշտ փաստաթղթերը[1] անձամբ կամ ուսումնական հաստատության լիազոր ներկայացուցչի միջոցով ներկայացնում է ՀՀ Կրթության և գիտության նախարարություն՝ Հա-

1 Տես Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2011թ. ապրիլի 28–ի N 700 –Ն որոշում:

յաստանում «կրթության իրավունք» ձեռք բերելու համար, այնուհետև համապատասխան հրամանի հիման վրա ուսումնական հաստատությունը կատարում է հրամանագրում, որից հետո տվյալ անձի փաստաթղթերը ներկայացվում են ՀՀ Ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչություն՝ Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակ ստանալու համար: Պրակտիկայում հաճախ լինում է այնպես, որ օտարերկրացու մուտքի արտոնագրի ժամկետը սպառված է լինում, և նա պետք է վճարի վարչական տույժ, քանի որ նրա՝ Հայաստանում գտնվելը համարվում է անօրինական: Այս հարցում օրենքի տեսանկյունից տեղի է ունենում անձի իրավունքների սահմանափակում: Եթե «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի համաձայն օտարերկրացուն տրամադրվում է հնարավորություն Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր մնալու թույլտվություն մինչև դատարանի որոշման օրինական ուժի մեջ մտնելը, ապա մեր կարծիքով օրենքը նմանատիպ մոտեցում պետք է ցուցաբերի օտարերկրացի ուսանողների նկատմամբ, սահմանի նմանատիպ նորմ՝ մինչ ՀՀ ԿԳ նախարարի որոշումը:

ՀՀ ԿԳ նախարարի 2017թ. հոկտեմբերի 24-ի հանձնարարությամբ վերոնշալ խնդիրը տեղափոխվեց ավելի անորոշ հարթություն: Այդ հանձնարարության մեջ նշված է. «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության շրջանակներում, Հայաստան մուտքի վիզայի անհրաժեշտության պարագայում օտարերկրյա դիմորդի կողմից անձամբ ներկայացվող համապատասխան փաստաթղթերի ընդունելությունը կազմակերպել միայն ուսանողական վիզայի առկայության պայմաններում»: Վերոնշյալ դրույթից պարզ է դառնում, որ եթե օտրերկրացին, ով Հայաստան է մուտք գործում ճանապարհորդական մուտքի արտոնագրի հիման վրա, չի կարող Հայաստանում ուսում ստանալ, այլ պետք է վերադառնա իր երկիր և ուսանողական վիզա ստանալուց հետո միայն վերադառնա Հայաստան՝ կրթություն ստանալու: Կարծում ենք այս հանձնարարականը պարզաբանման և հստակեցման կարիք ունի՝ ելնելով երկրի տնտեսական, սոցիալական վիճակից և կրթական համակարգում առկա խնդիրներից:

Մշտական կացության կարգավիճակը տրվում է 5 տարի ժամկետով այն օտարերկրացուն, ով ապացուցում է Հայաստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող ամուսնու կամ մերձավոր ազգականների (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) առկայությունը, Հայաստանի Հանրապետությունում ապահովված է բնակարանով ու գոյության միջոցներով և մինչև մշտական կացության կարգավիճակ ստանալու համար դիմում ներկայացնելն օրենքով սահմանված կարգով առնվազն երեք տարի օրիանական բնակվել է Հայաստանի Հանրապետությունում, կամ ազգությամբ հայ է, կամ Հայաստանի Հանրապետությունում իրակա-

նացնում է ձեռնարկատիրական գործունեություն:

Օտարերկրացուն Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ տալու և կացության կարգավիճակը երկարաձգելու որոշումն ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի N 134-Ն որոշման N 1 հավելվածում նշված փաստաթղթերն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում: Անձնագրային և վիզաների վարչությունն օտարերկրացուն կացության կարգավիճակ տալու որոշումն ընդունում է «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում: Օտարերկրացուն Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ տալու հարցն անձնագրային և վիզաների վարչությունը համաձայնեցնում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության հետ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով՝ ազգային անվտանգության ծառայություն ուղարկելով օտարերկրացու անձնագրի և դիմում-հարցաթերթիկի պատճենները, իսկ Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանող օտարերկրացիների դեպքում՝ միայն ցուցակները: Ազգային անվտանգության ծառայությունն օտարերկրացուն կացության կարգավիճակ տալու կամ կացության կարգավիճակը երկարաձգելու հարցի վերաբերյալ 7-օրյա ժամկետում անձնագրային և վիզաների վարչություն է ներկայացնում իր համաձայնության կամ առարկության վերաբերյալ տեղեկատվություն:

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածում նշված կացության կարգավիճակ տալը մերժելու հիմքերից[1] որևէ մեկի առկայության

1 Օտարերկրացուն կացության կարգավիճակ տալը կարող է մերժվել, եթե՝ 1) նա արտաքսվել է Հայաստանի Հանրապետության տարածքից կամ նախկինում զրկվել է կացության կարգավիճակից, և արտաքսման կամ կացության կարգավիճակից զրկելու մասին որոշման ուժի մեջ մտնելու պահից չի անցել երեք տարի, 2) նա դատապարտվել է Հայաստանի Հանրապետությունում՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար, և դատվածությունը սահմանված կարգով չի հանվել կամ մարվել, 3) գոյություն ունեն հավաստի տվյալներ, որ նա իրականացնում է այնպիսի գործունեություն, մասնակցում, կազմակերպում կամ հանդիսանում է այնպիսի կազմակերպության անդամ, որի նպատակն է՝ վնաս պատճառել Հայաստանի Հանրապետության պետական անվտանգությանը, տապալել սահմանադրական կարգը, թուլացնել պաշտպանունակությունը, իրականացնել ահաբեկչական գործունեություն, սահմանով ապօրինաբար (առանց համապատասխան թույլտվության) տեղափոխել զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր, ռադիոակտիվ նյութեր, թմրանյութեր, հոգեներգործուն նյութեր կամ իրականացնել մարդկանց առևտուր (թրաֆիքինգ) և (կամ) անօրինական սահմանահատումներ: 4) նա տառապում է «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով նախատեսված հիվանդություններից որևէ մեկով, 5) գոյություն ունեն նրա կողմից Հայաստանի Հանրապետության պետական անվտանգությանը կամ հասարակական կարգին լուրջ և հիմնավորված սպառնալիքներ, 6) կացության կարգավիճակ հայցելիս նա ներկայացրել է իր մասին կեղծ տեղեկություններ կամ չի ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթեր, կամ գոյություն ունեն տվյալներ այն մասին, որ նրա գտնվելը Հայաստանի Հանրապետությունում ունի այլ նպատակ, քան հայտարարվածը, 7) նա «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքը խախտելու համար ենթարկվել է վարչական պատասխանատվության և չի կատարել վարչական ակտով իր վրա դրված պարտականությունը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ վարչական պատասխանատվության ենթարկվելու պահից անցել է մեկ տարի:

դեպքում անձնագրային և վիզաների վարչության կողմից ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստանալու դիմումները կարող են մերժվել: Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ տալու դիմումը մերժելու մասին անձնագրային և վիզաների վարչության որոշումն օտարերկրացին կարող է բողոքարկել դատական կարգով: Օտարերկրացուն Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ տալու կամ կարգավիճակ տալը մերժելու որոշման կրկնօրինակն անձնագրային և վիզաների վարչությունը որոշումն ընդունելուց հետո եռօրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան 30 օրյա ժամկետում, ուղարկում է կացության կարգավիճակ ստանալու համար դիմած օտարերկրացուն:

«Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածում նշված հիմքերից յուրաքանչյուրով կացության կարգավիճակ տալը մերժելու դեպքում օտարերկրացին միայն մեկ տարի հետո կրկին կարող է դիմել կացության կարգավիճակ ստանալու համար: Մինչդեռ, այդ հոդվածում նշված որոշ դրույթների համար մեկ տարի ժամկետի նախատեսումը արդարացված չէ: Այսպես՝ օտարերկրացին տառապում է վարակիչ հիվանդությամբ, որը սպառնում է բնակչության առողջությանը, ինչպես նաև, եթե նա մուտքի թույլտվություն հայցելիս չի ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթեր: Մեր կարծիքով վերստին դիմելու համար մեկ տարվա ժամկետ սահմանելու փոխարեն ողջամիտ կլիներ, եթե այդ անձանց ընձեռնվեր կրկին դիմելու իրավունք առողջանալուց կամ անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելուց անմիջապես հետո:

Հատուկ կացության կարգավիճակ տրվում է ծագումով հայ օտարերկրացիներին: Այն կարող է տրվել նաև Հայաստանի Հանրապետությունում տնտեսական կամ մշակութային գործունեություն ծավալող այլ օտարերկրացիների:

Ինչպես ակնհայտորեն երևում է՝ այստեղ առանցքային կարևորություն ունի հայկական ծագման գործոնը: Սակայն, պետությունները տարբեր մոտեցումներ են ցուցաբերում ազգային ծագումը որոշելու հարցում: Որոշ պետություններում կացության որոշակի կարգավիճակ է տրամադրվում բացառապես անձին՝ ազգային ծագման վերաբերյալ սեփական հայտարարության հիման վրա (օրինակ, Սլովակիայում՝ չեխերի, իսկ Չեխիայում՝ սլովակներին: Նշված երկու երկրներում էլ գնչուական ազգության ներկայացուցիչների ազգությունը որոշվում է բացառապես նրանց հայտարարության հիման վրա)[1]: Նման հայտարարությունների արդյունքում անձը սովորաբար չի օգտվում որոշակի արտոնություններից կամ առավելություններից: Որոշ պետություններ շահագրգռված են պահպանելու ազգային ծագման քաղաքականության ճկունությունը և, հետևաբար, ազգությունը որոշելու չափանիշներ չեն սահմանում, իսկ որոշ պետություններ էլ հստակ

1 Տես Հ.Կաբելեովա, Ա. Մազմանյան, Ա. Երեմյան. Հայաստանի Հանրապետությունում միգրացիոն օրենսդրության գնահատում: Երևան 2007թ. էջ 44: http://www.osce.org/hy/yerevan/25960?download=true (մուտք է գործվել 26.11.2017թ.):

պահանջներ են ներկայացնում ազգային ծագումը որոշելու համար[1]:

ՀՀ արտգործնախարարության պարզաբանմամբ՝ հայկական ծագումը որոշվում է կամ տվյալ անձի ազգանունով, կամ էլ նրա երկրում հայկական եկեղեցու կամ սփյուռքահայ որևէ կազմակերպության կողմից տրամադրված պաշտոնական փաստաթղթի միջոցով[2]: Մինչև 2011 թվականը «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը ամրագրում էր «ծագումով հայ» արտահայտությունը և դիտարկում էր այն անձին, ով ունի հայ նախնիներ[3]: Թերևս, այս պարզաբանումները հստակ և համակողմանիորեն չեն պարզաբանում «ծագումով հայ» եզրույթը, ինչի արդյունքում գործընթացը մեծ մասամբ դառնում է կամայական:

Հատուկ կացության կարգավիճակ տրվում է տասը տարի ժամկետով, որը կարող է տրվել մեկից ավելի անգամ:

Հատուկ կացության կարգավիճակ ստանալու համար դիմումը Հայաստանի Հանրապետության տարածքում ներկայացվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմին, իսկ օտարերկրյա պետությունում՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հիմնարկ:

«Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն, այն է՝ «Հատուկ կացության կարգավիճակ տալու կամ մերժելու որոշում կայացնում է Հայաստանի Հանրապետության նախագահը: Այդ որոշումը վերջնական է և ենթակա չէ բողոքարկման»: Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ, բացառությամբ հատուկ կացության կարգավիճակի, կացության կարգավիճակ ստանալու կամ երկարաձգելու համար ներկայացված դիմումի մերժումը օտարերկրացին կարող է բողոքարկել դատական կարգով:

Հարց է առաջանում՝ արդյոք տեղի չի՞ ունենում մարդու իրավունքների սահմանափակում: Ըստ մեզ այս դրույթը հակասում է ոչ միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, այլ նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին, Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիային:

Մասնավորապես՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 8-րդ հոդվածը նշում է, որ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի Սահմանադրությամբ կամ օրենքով իրեն տրված հիմնական իրավունքները ոտնահարելու դեպքում իրավասու ազգային դատարանների միջոցով արդյունավետ վերականգնելու այդ իրավունքները»: Մարդու իրավուքների մասին

1 Տես Конституционное право зарубежных стран: Учебник для вузов / Под общ. ред. чл.-корр. РАН, проф. М. В. Баглая,д. ю. н., проф. Ю. И. Лейбо и д. ю. н., проф. Л. М. Энтина. — М.: Норма, 2004. — էջ 832:

2 Տես http://www.mfa.am/hy/ (մուտք է գործվել 26.11.2017թ.):

3 Նշենք որ « Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի վերոնշյալ կետը ուժը կորցրել է 2011թ. օրենքում փոփոխությունների և լրացումներ կատարելուց հետո: Օրենսդիրը նախատեսել է «...Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն կարող է ստանալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող ազգությամբ հայ անձը»:

Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք: ՀՀ Սահմանադրական դատարանի 2006 թվականի նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665 որոշման համաձայն՝ անվավեր է ճանաչվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի դրույթը, համաձայն որի, ի թիվս այլ մարմինների, ընդհանուր իրավասության դատարաններում չէին կարող վիճարկվել ՀՀ նախագահի հրամանագրերը[1]: Ինչ է տեղի ունենում այս պարագայում. օտարերկրացին, ով դիմել է իրավասու մարմնին հատուկ կացության կարգավիճակ ստանալու, և դիմումը նախագահի կողմից մերժվել է, զրկվում է իր իրավունքների դատական պաշտպանության միջոցից:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունը, հանդիսանալով միջազգային հանրության լիարժեք սուբյեկտ, պետք է միջոցներ ձեռնարկի ոչ միայն իր քաղաքացիների իրավունքների, ազատությունների և երաշխիքների սահմանման համար, այլ նաև նպաստի օտարերկրացիների համար բարենպաստ օրենսդրական դաշտի ստեղծմանը:

1 Տես Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի որոշումը քաղաքացիներ Սոֆիկ Գասպարյանի և Արտակ Ջեյնալյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160 հոդվածի 1-ին կետի՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով: ՍԴՈ-665 որոշում: http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=28445 (մուտք է գործվել 26.11.2017թ.):

Мерри Шахбазян
Преподаватель юридической кафедры Международного университета Евразия, соискатель кафедры

ПОРЯДОК И УСЛОВИЯ ПРЕДОСТАВЛЕНИЯ ВИДА НА ЖИТЕЛЬСТВО В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Статья посвящена порядку и условиям предоставления вида на жительство в Республике Армения. Автор сделал сравнительно-правовой анализ понятия «иностранец», отмечая, что данное понятие включает не только иностранцев, но и лиц без гражданства. Автор представил временный, постоянный и особый виды на жительство, проанализировал существующие юридические проблемы и предложил механизмы их регулирования.

Ключевые слава: иностранец, лицо без гражданства, вид на жительство, временный вид на жительство, постоянный вид на жительство, особый вид на жительство.

Merri Shahbazyan
Lecturer of the Law Department at Eurasia International University, Ph.D. Student

PROCEDURE AND CONDITIONS FOR GRANTING RESIDENCY STATUS IN THE REPUBLIC OF ARMENIA

The article touches upon the rules and conditions of Foreigners' obtaining residence permit. The concept ''Foreign citizens'' has been analyzed from legal-comparative standpoint, positing the fact that it concerns not only foreign-citizens but also stateless persons. The author discusses temporary, permanent and special conditions of residence by analyzing their legal issues and suggesting some solutions.

Key words: Foreign citizens, stateless, resident status, temporary residence status, permanent residency status, special residence status.